

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՂՃ.
Վերջումս Կ. Պոլսոյ 10 ՄՂՃ.
Վերջումս Կ. Պոլսոյ 5 ՄՂՃ.
Վերջումս Կ. Պոլսոյ 3 ՄՂՃ.
Վերջումս Կ. Պոլսոյ 2 ՄՂՃ.
Վերջումս Կ. Պոլսոյ 1 ՄՂՃ.
Վերջումս Կ. Պոլսոյ 0 ՄՂՃ.



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 3 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պատերազմին վրայ Ասիայէն եկած պաշտօնական լուրերը նշանակաւոր են Օսմանեան զինուոյ : Ահա մէտ Մուսթաֆա փաշան կը հեռագրէ թէ Ռուսք Արտասանի գետին վրայ կամուրջ շինելու զբաղած էին, բայց Արտասանի Միւրիմիւրան Հանի Հիւսէյն փաշան օժանդակ հեծեալագործը թշնամոյն վրայ քարեր է, որ չորս ժամ կուտէ ետեւ քանի մը վերաւոր և երեք մեռեալ թողլով եւ քաշուելու պարտաւորութիւն է : Այս կուտոյն մէջ յիշեալ Միւրիմիւրան Ալի փաշայի ձին վերաւորներ և մէկ մարդ մը զարնուեր է իւր ձիով : Կարնոյ կուսակալը կը հեռագրէ թէ Կարսի բերդին հըրաւմանատարէն առած հեռագրի մը համեմատ՝ Կարսէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ Այնեյի անուն տեղը կուի մ'ըլլալով թշնամին քառասուն չափ մեռեալ ունեցեր և ետ դարձեր է : Օսմանեան զօրքէն քանի մը մարդ և ձի մը վերաւորներ են : Թշնամոյն մէկ զօրաբաժինը Կաղզուանի կողմը գնացեր է : Գիշերանց հրացաններ պարպուեր են Ռուսաց պահակներուն կողմանէ, որոյ Օսմանեան պահակները պատասխաններ են, բայց վերաւոր եւ չէ պատահեր : Ռուսք էմիր օղլու ամրոցին վրայ յարձակեր են, և երկու կողմէն թնդանով արձակուելով, Ռուսք յետո նահանջներ են : Պաթմու մի հրամանատար Հասան փաշան ալ կը հեռագրէ թէ ապրիլի 29ին առաւօտուն ժամ մին միջոցները թշնամին Օսմանեան յառաջապահներուն վրայ յարձակելով, մինչև ժամ 3 1/2 սաստիկ կուի մ'եղեր, և թշնամին չկրնալով գիմարել, քանի մ'անգամ յետո նահանջելու պարտաւորութիւն և քանի մը կողմէն նորէն յարձակեր է զօրութիւնն աւելցնելով : Բայց Օսմանեան զօրքն յաղթող ելեր է, և թշնամին չորս հազարէն աւելի մեռեալ թողլով պատերազմի դաշտին վրայ յետո ընկերներ է : Այս յաղթութիւնը Չիւրիւք-Սուլի Ալի փաշային ներկայացուցած տեղեկագրին համեմատ հեռագրուած է :

Այս հեռագրալոյս պարունակութիւնը գուցէ Ռուս զօրապետաց տեղեկագրութիւններուն համեմատին, այսու ամենայնիւ յայտնապէս կերելի որ Ռուսք յաղթութիւն ձեռք բերած չեն, և թերեւ առաջին օրերը վարտակած յաղթութեանց մէկ մասն ալ կորուսած ըլլան : Օսմանեան զօրքն ամեն կողմէն գիմարելու թիւն կընէ, և թէպէտ պատերազմի հրատարակութենէն ի վեր քան օրն անցաւ, Ռուսք չկրցան յառաջանալ, ո՛չ ալ նշանաւոր դիրք մը դրաւ եւ : Դանտ

բի կողմը քանի մ'անգամ փորձ ըրին գետն անցնելու, բայց չյաջողեցան : Իսկ Սերվիոյ կողմէն անցնելու դիտաւորութիւն չեն ցուցներ, փաստի Ս. Էրսարիոյ տէրութիւնը պատերազմին իւր սահմաններէն հեռացնել ուզելով պահանջներ է որ Սերվիոյ չէզոքութիւնը չընաբարի, և կերելի որ Բեդրասպուրի արքունիքն ալ Աստուրիոյ փափաքանց համեմատ շարժիլ խառնացեր է : Ուստի թէև Միւրիմիւրան Ալի փաշայի կայսեր ծննդեան տարեդարձին օրը եկեղեցին ներկայ գտնուեր է իւր նախարարաց հետ, բայց առ այժմ չյուսացուի որ Սերվիա իրական օգնութիւն մ'ընէ Ռուսիոյ, որովհետեւ իւր զօրութիւնը վերջին պատերազմին մէջ սպառած է : Սերվիա Բ. Դրան հետ յարաբերութիւնները կանոնաւոր վիճակի մէջ դրաւ : Պ. Գրիմիլին ալ իրեն գործակաւոր կարգելով մայրաքաղաքի մէջ ինչպէս յայտնի է, Պ. Գրիմիլին հաշտութեան բանակցութեանց համար մայրաքաղաքը եկած էր, և իւր չափաւոր և հաշտասէր քաղաքականութեամբ խաղաղութիւնը կնքելու մեծապէս ծառայած : Կըլուսանը որ Սերվիա այս խաղաղութիւնը նորէն չսղեր ի մնաս իւր :

Ռուսական էմպալիտ լրագիրը Ռուսիոյ Դանտուեան զօրաբանակայ հրամանատար Նիքոլայ Մեծ դ. ք. Գրիմիլին խաղաղութիւնը կը հրատարակէ ուղղեալ առ զօրական և սպայս : Մեծ դ. ք. Գրիմիլին իւր զօրաց հասկցած միւրեւանութեան լեզուով կը խօսի, որ պատերազմին դժբաղդաբար կրօնական կերպարանք կուտայ, եթէ Օսմանցիք ալ նոյն լեզուով և ոգով պատասխանեն միշտ :

Թուրքաց լուծը, կըսէ, դարերէ ի վեր ծանրացած է մեր քրիստոնեայ եղբարց վրայ : Անոնց հարստահարութիւնն անգութ է : Ինչ որ սիրելի է մարդոց, Գրիմիլին սուրբ կրօնքը, պատիւը, ճակտի քրտնքով և արիւնով վաստկուած ինչքը, ամեն ալ կը թշնամանուի "անհաւատներէն" : Այս տարաբաղդներուն համբերութիւնն սպառեցաւ, իրենց բռնաւորաց դէմ ոտք ելան, և երկու տարիէ ի վեր քրիստոնեայ արիւնը թափեցաւ, ինչքը յափշտակեցաւ, կրնան ու աղջիկներն անպատուեցան, քանի մը տեղեր ժողովուրդը խմբովն ջարդուեցաւ : Գրիմիլին վիճակը բարեւոքելու համար մեր վեհապետին և օտար տէրութեանց բարձր յանդիմանութիւններն ապրիլի 12ին եղան : Մեր ազատարար Զարին համբերութիւնն հատաւ, և թուրքիոյ դէմ պատերազմ հրատարակեց : Ապաք և զօրականը որք իմ հրամանաւ նախ ներքե էք, մեք մեր վեհապետին հրամանը գործադրելու և մեր հարց մեզ փառանգութիւն թողու

ցած գործը կատարելու կերթանք : Մեք երկրակալութիւններ ընելու չենք քալեր, այլ մեր թշնամանեալ և բռնաբարեալ եղբայրներն և Գրիմիլին հաւատքը պաշտպանելու կերթանք : Այս լեզուն որ կրօնական զգացումները կը գրգռէ, միով բանիւ նոր խաղաղութիւն մը կը քարոզէ թուրքիոյ դէմ : Ներկայ դարու սկզբանց և քաղաքականութեան դէմ է, փաստի կրօնական աստեղծութիւնները նորոգելու պատճառ կըլլայ : Ուստի թէև Ռուս զօրականները գըրգըրէ, բայց Եւրոպիոյ վրայ լաւ տեղաւորութիւն չկրնար ընել : Թուրքիոյ քրիստոնեայք կը փութան մեր ժել այսպիսի մեղադրական յայտարարութիւնները :

Ալեքսանդր կայսրը պատերազմի յայտարարութիւնէն ետեւ Բեդրասպուրի դարձաւ : ամեն անգամ քաղաքաց մէջ ընդունելութեան ցոյցեր տեսնելով : Քիշնէֆի մէջ կայսրը զօրահանգէն ետեւ կոչուեց մը տուած է ընդհանուր հրամանատար Նիքոլայ մեծ դ. ք. Գրիմիլին և Գրիմիլին զօրապետաց : Այս առթիւ կայսրը շնորհակալութիւն յայտնեց բանակին լաւ վիճակին և զօրապետաց անոր տուած կատարեալ ուղղութեան վրայ, և յուսալով որ ընդհանուր հրամանատարն իւր պարտքը պիտի կատարէ, բաժակ ընկեց անոր և բանակին կենաց համար : Նիքոլայ մեծ դ. ք. Գրիմիլին պատասխանեց թէ իրենց պարտքը պիտի կատարեն մինչև իրենց արեան վերջին կաթիլը թափելով, և ինք ալ կայսեր կենաց բաժակ ըմպեց "ուռա" գոչելով : Ռուսաց այս ցոյցերն իրենց սովորական են : Բայց ամենէն բարձր գաղափարներ՝ ամենէն սքանչելի խօսքեր՝ չեն կրնար ծածկել այն անօգուտ արիւնհեղութիւնն ու ջարդը որ սկսան և զոր բոլոր քաղաքակիրթ աշխարհի գիտակցութիւնը կը դատապարտէ : Յանուն կրօնի և "մարդու ամենասիրելի" եղած բաներու Ռուսիա պատերազմ կը դիմէ, ուր անթիւ մարդոց կոտորած պիտի ըլլայ, և գարնային մարդերն արեամբ պիտի ներկուին քանի մը մարդոց փառասիրութիւնն յաղեցնելու համար : Թուրքիա կրնայ շատ պակասութիւններ ունենալ և ունի, բայց այս պատերազմը գրգռողը յարուցանողն և նախադրածակը նա չեղաւ :

Եւրոպական վերջին թերթերն Անգլիոյ թագուհւոյն հրատարակած չեղութեան յայտարարութիւնը կը բերեն :

Ահաւասիկ թարգմանութիւնը :

"Ուլիստոյ 30 ապրիլ :
"Ամեն վեհապետաց և ամեն տէրութեանց հետ հաշտ ըլլալով, Չարին և Սուլթանին մէջ մեր ամեն ջանք հակառակ ծագած պատերազմը

ՊԱՅՄԱՆՔ

Կուրս գալով լրագրաց ծանուածաբքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր — Տնօրէնին պիտի ուղղուի : Գալաթիոյ Ստամբուլի շտապարի թիւ 198, Կոստան, Մասիսի գրասենեակը :
Ծանուածաբքը չվճարուած նամակ չընդունուիր :

նկատելով, այս երկու վեհապետաց հետ մեր ունեցած բարեկամութիւնը նկատելով, որոշած ենք բացարձակ և անկողմնակալ չեղութիւն պահել :
"Կը հրամայենք մեր հպատակաց որ այս չեղութիւնն ամենայն ճշգրտութեամբ պահպանեն :

Խտալիոյ պաշտօնական կազմ լրագիրն ալ հետեւեալ յայտարարութիւնը կը հրատարակէ ապրիլ 29 թուով :

"Ռուսիոյ և թուրքիոյ մէջ պատերազմ ծագելով, և խտալիա ալ այս երկու տէրութեանց հետ հաշտ ըլլալով, խտալիոյ կառավարութիւնն ու քաղաքացիները պարտականութիւն ունին չեղութիւն պահպանել խղճմամբ եւ համեմատ հատաւորութեամբ օրինաց և ընդհանուր սկզբունքի միջազգային իրաւանց :

"Մենք որ այս պարտականութեանց հակառակ վարուին, չպիտի կրնան խտալիոյ կառավարութեան և անոր գործակալատարց պաշտպանութիւնը խնդրել, և միանգամայն Պետութեան ընդհանուր և մասնաւոր օրինաց տրամադրած պատիժներն ալ ըստ պարագային պիտի կրնան :

Գաղղիոյ արտաքին գործոց նախարար Տըքազ դ. ք. Գրիմիլին չըջբերակները զրկեց Գաղղիոյ դեսպանաց և գործակալատարց :

Վերայի 23 ապրիլ 1877

Տէր :

Արեւելից մէջ ծագած կնճիռներուն առջեւ պարտք կը համարիմ իւրեցնել ձեզ այն խորհուրդներն որովք ջանացնէք առ նոնց առաջն առնուլ, ինչպէս նաեւ այս ծանր պարագայից մէջ մեր բռնելիք դիրքը :

Ձեր աչաց առջեւ չափաւոր դնեմ այս կուլին դարձուածներն՝ որ դրեթէ երկու տարիէ ի վեր ծագած և կառավարութիւնները միշտ արթնութեան մէջ պահած է : Մեք, Եւրոպիոյ խաղաղութիւնը պահպանելու փափաքով՝ մեր աշխատութիւնն անկեղծաբար նուիրեցինք այն ամեն ջանից որ խաղաղութիւնը պահպանելու կամ վերահաստատելու համար ի գործ դրուեցան : Խնդրուած էր մեզնէ, թէ Բ. Դրան կառավարութեան կողմէ, որ առաջին օրին տէրութեանց բարեկամական միջնորդութեանը դիմած էք, և թէ՛ Ռուսիոյ կառավարութեան կողմէ, որ շատ շանցած՝ պարտք համարեք էք Պաքստանց սպաստարութեան յառաջիկա մէկն ծագած խնդրոց վրայ բովանդակ Եւրոպիոյ խորհրդակցութիւնը հրաւիրել :

Այն օրէն ի վեր տեղի ունեցած բանակցութեանց մասնակցելով ի սրտէ կը փափաքէինք նպատակել այն գործին որոյ նպատակն էր հաշտութեան միջոց մը գտնել Գրան և իւր քրիստոնեայ հպատակաց մէջ, և տէրութեանց իրարու հետ համեմատութիւնը զօրացնել : Գաղափարութիւններն անուշտ բարեկամութիւն կին, բայց նախատեսելով որ եթէ Հիւսիսի ապաւանտարարութիւնը չուտով հանգարտէր, աւելի պիտի մեծնար և Եւրոպիոյ խաղաղութիւնը վրայվէր, ներքի չէր մեզ վր :

Հատիկ ամեն կառավարութեանց հաւասարակէս վերաբերեալ գործի մը կառարման մէջ, որ անոնց միտքները պատրաստելու և հաստատ պահելու վրայ պիտի կայանար:

Երբոր երկար բանակցութիւններէ ետեւ մարտ 31 ի նախնական դաշնագիրն ստորագրեցին, իրենց համերատար ջանքն իմանալով իմացանք թէ Սուլթանին խորհրդականները չէին ընդունելու այն դաշնագիրն, որ պատուաւոր միջոց մը կը մատակարարէր Թուրքիոյ՝ զինքը չընկալուող դժուարութիւնները խաղաղութեամբ լուծելու:

Կ. Պոլսոյ դեսպանախորհրդին հետեւեալ օրը՝ Դուռն յայտարարած էր թէ Եւրոպայոյ լիազօր երեսփոխանաց որոշած հիմնադրին ամեն կէտերուն վրայ համաձայն էր անոնց հետ, ի բաց առեալ երկու կէտ: 1877 յունվար 23 թուով ընթացեալ թիւնին մէջ յոյս կը յայտնէր թէ այսպիսի թեթեւ անհամաձայնութեան մը պատճառաւ Եւրոպա իւր համակրութիւնն ու բարեկամութիւնը չպիտի վերցնէր Թուրքիոյ վրայէն, և այսպէս անուղղակի կերպով ապագայ բանակցութեանց պատեհութիւնը ցոյց կուտար, որով կատարեալ համաձայնութեան մը վերջին արգելքն էր պիտի կրնային վերանալ:

Կը թուէր թէ Լոնտոնի դաշնագիրն այս փափաքին երականացումը պիտի դիւրացնէր. վասն զի, մեր ստորագրած բնագիրն այնչափ թեթեւացած էր, որ Եւրոպայոյ առաջարկութեանց և խորհրդոց բովանդակութիւնը՝ Կ. Պոլսոյ դեսպանախորհրդին առջև Թուրքիոյ լիազօր փոխանորդներուն ըրած յայտարարութեանց և վերջին ժամանակներս Սուլթանին հըրամայած ներքին բարենորոգմանց բովանդակութեանը կը վերածէր:

Բայց և այնպէս հակառակ մեկնութիւն մը տրուեցաւ անոր Կ. Պոլսոյ մէջ, և ծայրայեղ որոշումները փութացուց, որք երկու տարիէ ի վեր ի դործ դրուած գիւնապարտական ջանքից առջև ճանքան փակեցին:

Այս փախճանն հեռացնելու համար այնչափ քանք ընելէ ետեւ, ուրիշ բան չունիւր հիմա ընելիք, այլ միայն ասկէ ծագելիք կնճիռներուն չխառնուելու մեր հաստատուն կամքը յայտնել:

Հաճեցէք ուրեմն բարձրաձայն յայտնել մեր քաղաքականութիւնը, որ է խղճամիտ չեղճութիւն Գաղղիոյ երկրին և իւր երեսփոխանաց միաձայն գզացումը, կուրին թաղքէն մեր հեռաւորութիւնը և վերջապէս մեր էական շահոց բնութիւնը, ամենքն ալ այս դիրքը բռնել կը հրամայեն մեզ, և չպիտի փոխենք զայս մինչև այն օրն՝ ուր նոր պարագաներ թոյլ տան Եւրոպիոյ՝ միաբան գործակցութեամբ խաղաղութեան վերադարձը պատրաստելու դիւրացնել:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 11 մայիս:

Երեսփոխանաց ժողովին մէջ վիճաբանութիւնը կը շարունակէ Արևելեան խնդրոյն վրայ: Պ. Կլապթոնի կուսակցութիւնը կառավարութեան գործերու ազատութեան արգելք եղող խնդիրներ կառաջարկէ:

Պ. Պուրք յայտնեց թէ նաւատորմը Դանուբ գրկելու նպատակաւ պատրաստութիւն սեղի ունեցած չէ բնաւ:

Լոնտոն 12 մայիս:

Երեսփոխանաց ժողովի մէջ Պ. Պուրք խօսք առաւ կառավարութեան բռնած քաղաքականութիւնն արդարացնելու և ցուցնելու համար թէ Եւրոպական ներդաշնակութիւնն աւուրցն Անգլիոյ չէ: Պ. Պուրք թիւստորայէս արդեց սա կէտին վրայ թէ կառավարութիւնն երբեք չպիտի հաճութիւն տայ այնպիսի միջոցներով որք Թուրքիոյ գոյութեանը կ'սպառնան:

Վիճարանութիւնն՝ որ երկուշաբթի օրն ալ պիտի շարունակէ, նախարարութեան նպատաւոր է:

Կը հաստատեն թէ Եգիպտոս Սուէիէ ջրանցքը պիտի գոցէ Ռուսիոյ պատեհագիւն նաւերուն:

Հոմ 12 մայիս:

Խաղաղական դեսպան Պ. Գորթի Կ. Պոլսոյ դէմաց:

Պուրք 12 մայիս:

Կարդուա իշխանն Օլիվէիցա գնաց:

Լոնտոն 12 մայիս:

Հակառակական մեծ ժողով (միթինկ) մը պիտի գումարի վաղը Լոնտոնի մէջ:

Փարիզ 13 մայիս:

Պ. Երնէս Բիքառ մեռաւ:

Մարտի 12 մայիս:

Սպանիա բանգարման չեղողութեան յայտարարութիւն հրատարակեց:

Պրինտիպի 12 մայիս:

Հունգարիայէն վերադարձող Թուրք ուսանողաց (սոփիստից) պատգամաւորութիւնն այսօր Լոյսի շոգենաւով մեկնեցաւ ի Կ. Պոլս: Նոյն շոգենաւով գընացաւ Աֆղանստանի Էմիրին եղբորորդի իսկանտէր խան, որ Կ. Պոլս կերթայ իւր ծառայութիւնը Սուլթանին նուիրելու:

Նիւ-Եորք 12 մայիս:

Պուլթաքօ ծովապետին հրամատարութեան ներքև գտնուող Ռուսական նաւախումբին հրաման եկաւ որ Ամերիկայէն անմիջապէս մեկնելով՝ Գրոնշտատ վերադառնայ:

Բէրուի մէջ սաստիկ շարժ ելնելով՝ Եւրոպա քաղաքը գրեթէ բոլորովին կործանեցաւ:

Ալեքսանդրիա 13 մայիս:

Անգլիոյ նաւատորմը մայիս 13 ին Բոր-Սայիտ կ'սպասուի:

Հոմ 14 մայիս:

Երեսփոխանաց ժողովը թագաւորին թոշակն աւելցնելու առաջարկութիւնն ընդունեց:

Պուրք 14 մայիս:

Կարդուա իշխանն այսօր Բոքսթի գնաց յայցելութիւն Նիքոլա մեծ դքսին:

Լոնտոն 14 մայիս:

Օմմ. Գոնս. 8 5/16
Փոլս. 1865 8 3/4
" 1869 8 1/2
" 1871 28
" 1872 14 3/4
" 1873 8 1/8
Եղիպտ. —
Անգլ. Գոնս. 93 15/16

ՊՈՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Դանուբի նաւախումբին հրամատար Տիւրաթի փաշայէն ապրիլ 29 թուով ծովային գործոց նախարարին եկած հեռագիր մը լուր կուտայ թէ Լուսիթ ձէլիլ անուն զորահաւորն, որ Բոթ պաշխի և Մալինի մէջ տեղն երկաթ նետած էր, յանկարծ բռնկելով (վառագարանէն) խորտակեւ և գետատոյճ եղեր է: Մէջը գտնուող ութսուն նաւազէն մէկ հօգի միայն ազատուր է:

Մալինի գայմազ ամէն եկած վերջին հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ Դանուբի եզիրը գտնուող Չէրթէնքեր յաջորդը են Լուսիթի ձէլիլի հրամանատար Նէճիպպէյ նաւապետն և 8 նաւաղ ազատուր, որք նաւին բեկորներուն փոթթուած էին:

Ռուսուքէն շարժած օրը տրուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գալաֆաթի մէջ Ռուսաց չինամ մարտկոցներն աւելելու համար Վիտինի բերդէն ուսմար արծաթեկ ելով, Ռուսք ալ վերստին Վիտինը ռմարկոծել ըսկներ են: Կախը կը շարունակէր:

Ռուսուքէն մայիս 11/12 թուով Պատիթթի ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ Ռուսական զօրաց հեծեալ և հետեակ գաւազեր՝ զորահաւորաց բացակայութենէն ոգուաբար զերծ Դանուբն անցեր և Բոթ պաշխ ըսուած տեղը գրուել են: Հետեւաբար բուռն կռիւ մը սկսեւ է Օսմանեան և Ռուս զօրաց մէջ:

Նոյն թուականաւ Վիտինէն եկած հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ անծանօթ շոգենաւ մը Դանուբն ի վար իջնելով, Գալաֆաթի Ռուսական մարտկոցներուն հետ սկսեւ է բուռն արձակել Վիտինի վրայ: Այն ժամա-

նակ Վիտինի մարտկոցներն ու զրահաւորներն ալ Գալաֆաթի վրայ բուռն արձակել սկսեւ են: Թշնամւոյն բուռնութիւնը քանի մը տուէր այրեր են Վիտինի մէջ: Բայց վերոյիշեալ շոգենաւը Վիտինէն քիչ հեռու աւազի վրայ նստելով, Օսմանեան զօրքէն բռնուել է:

Սիլիսթիէն ալ լուր կուտան թէ Թոթրաքանի Օսմանեան մարտկոցները կը ռմարկոծեն զՕլիվէիցա:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ:

Վսեմ. Սատուլլահ պէյ Պէլլինի Օսմ. դեռպան տնտեսնեցաւ:

Եւրոպայի ժողովին անդամներէն Ալէքս փաշան Դանուբեան գաւառին, և Խալաֆի փաշան Տրապիզոնի կուսակալ տնտեսնեցաւ:

Վեհ. Սուլթանը կորաքոֆի վերջին շրջաբերականին գէմ Լորտ Տէրպիի տուած պատասխանին վրայ գահ ըլլալով, արքունեաց Ֆէրիդ Սոյիտ փաշայի միջոցաւ յատկապէս իւր դահլիճին Պ. Լալլարի յայտնելէ ետեւ, հրաման ըրաւ որ իւր շնորհակալութիւնն յատկապէս Լորտ Տէրպիի ալ հաղորդուի:

Կըսուի թէ Բ. Դուռը Սահմանադրութեան 17րդ. յօդուածին համեմատ, որ կրէ թէ ամեն Օսմանեան հայտատկ միևնոյն իրաւունքն ու պարտականութիւնն ունին, որոշեւ է տէրութեան հայտատկ ամեն ազգի ժողովուրդները զինուորագրութեան օրինաց ենթարկել: Հետեւ արար մօտ ժամանակէն վիճակարկութիւնը պիտի սկսի: Այս որոշման բնական հետեւանքն է զինուորական տրոց բարձումն, որով տէրութեան գանձուն մէկ կարեւոր հասոյթ կը պակսի: Բ. Դուռն այս բացը գոցելու միջոցներուն վրայ ալ ծրագիր մը կը պատրաստէ, զոր երեսփոխանական ժողովի պիտի ներկայացնէ:

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Թուրքի զէյ 23000 զօրք պիտի տայ Թուրքիոյ, հինգ հազարը հեծեալ:

Պատերազմական գործոց նախարարութիւնը կայսերական զօրաց գործածած Մարթինի-Հէնրի հրացաններուն փամփուշտը մինչև ցարդ Ամերիկայէն բերել կուտար: Ասոր անպատեհութիւնն և ծախսոց ծանրութիւնը նկատելով, թմբակաւորութիւնը վերադառնալով իրեն յիշեալ փամփուշտներուն Կ. Պոլսոյ մէջ չինութեան համար պէտք եղած միջոցները ձեռք առաւ, և հիմա իւր գործարաններն օրը 5—10 հազար փամփուշտ կը շինեն:

Վեհ. Սուլթանին կրտսեր եղբայր Բարձր. Նուրէտտին էֆէնդին ինն ձի և 100 հատ 100 նոց թղթադրամ նըւիրից կայսերական զօրաց պիտոյիցն համար:

Վեհ. Սուլթանին ճարտարապետ Վսեմ. Սարգիս պէյ Պալեան վեց ընտիր ձի նուիրեց կայսերական բանակին:

Քաչկարի Էմիրին կողմէ եկած արտաքին կարգի պատգամաւոր Եւրոպ պէյ անցեալ շաբթու մայրաքաղաքէն Լոնտոն գնաց:

Պատիթթի խօսքին նայելով, Եւրոպ պէյ պաշտօն ունի եղբոր Անգլիոյ կառավարութեան խնդիրներն որ Զինատանն և Քաչկարի մէջ շարունակուած պատերազմը գաղթե-

ցընել տալու համար միջնորդէ Զինաց կառավարութեան քով, որպէս զի Գաչկարի Էմիրը կարող ըլլայ իւր գէնքը Ռուսիոյ գէմ գարձուել:

Ռւրաթ աւուր Թրիէստի շոգենաւով մայրաքաղաքս եկան Հունգարացի Քարպիս զօրավարն և անգլիական լրագրաց չորս թղթակիցք (երկուքը Թայմզի), որ պատերազմին տեղը պիտի երթան:

Մայրաքաղաքիս լրագրերէն ուսնալ՝ հաստատութեան դուրահաւատութիւնն իրենց շահու միջոցը և ներս համար տուաւ վառ լրաց յաւելուածներ հրատարակելու ձեռնարկած ըլլալով, Բ. Դուռը խտրաւ արգելեց յաւելուածոց հրատարակութիւնն: Այս արգելքէն ազատ են միայն պաշտօնական թերթերն, որք կառավարութեան հաղորդուած փաւերական լուրերն հրատարակելու պաշտօն ունին:

Փարիզէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Միտհաթ փաշան Մատրիտէն հոն հասեր է:

Մայրաքաղաքիս Օսմանեան տնտեսները մեծ պատրաստութիւններ կը տեսնեն Բէշլայէն ետ դարձող ուսանողաց (սոփիստ) պատգամաւորութիւնն հանդիսաւոր կերպիւ ընդունելու:

Անտուրէն եկած լուրերն ընդհանրապէս յաջող յոյսեր կուտան այս տարուան հեծոց վրայ: Ապրիլ ամսոյ մէջ գրեթէ ամեն տեղ անձրեւ գալով՝ երկրագործաց երկիւղները փորատուր են: Պողատու ծառոց բերքերն ալ առատութեան յոյս կուտան:

Հասունեան գերապայծառը կիւրակի օրը տեսակցեցաւ Վսեմ. Սաֆֆէթ փաշային հետ:

Ռւրաթ իրիկուն Կ. Պոլս Պահճէ գաւուի ներսը քաղաքապետութեան պաշտօնարանին մօտ տունէ մը հըրդեհ երկրով եօթն տուն ուրեցան:

Եւրոպ օրն Օսմանեան երեսփոխանական ժողովը քաղաքական կարեւոր խնդիրներով պրագնեցաւ:

Առեանը բացուելուն, երբ ժողովը լրագրական օրինաց վրայ վիճարանութիւնը շարունակելու պիտի սկսէր, իզմիրի երեսփոխան Էմիրիէն հիւրի գաւե Ալմէտ էֆէնդի խօսք առնելով բնմն եկաւ և գրաւոր երկար ատենաբանութիւն մը կարդաց: Ալմէտ էֆէնդի օրն ատենախօսութեամբ իրաց ներկայ կացութեան և գտնուած վիճակնու վրայ բացատրութիւններ կը խնդրէր կառավարութեան:

Եթէնամին մեր դուռն հասած է, ըսաւ, և դեռ մեք երկրորդական խնդիրներով կ'ըրաղինք, մինչդեռ մեր բոլոր ուշադրութիւնն ու հոգը պատերազմին վրայ պէտք է ինք գարձուել:

Էթնէ կղան, օր և ինչ վիճակի մէջ են մեր բանակներն, ինչ կղած է Ալմէտ Սուլթան փաշա, որոյ նկատմամբ հաստատակաց կարծիքը խիստ անհանգիստ և մտատանջութեան մէջ է: Ինչո՞ւ կառավարութիւնը լուսթիւն կը պահէ բոլոր այս բաներուն վրայ, և ինչո՞ւ Սպարապետութիւնը մէկը օգնական չղկեր տուր, և կամ ինչո՞ւ համար պատերազմի պաշտօնեայ Բէտիֆ փաշա ինքքն անձամբ պատերազմի գաւոր չերթար՝ թշնամոյն գէմ կեցող բանակներն աչքէ անցնելու:

Ահմէտ Էֆէնտի յետոյ գտնաւ յին ու գրամական փոխարին վրայ բերելով խօսքը . ինչ ինչ միջոցներ առաջարկեց ներկայ գիտարութեանց մասամբ մ'առաջն առնելու և կառավարութեան թող տալու որ երկրին պաշտպանութեան գործը շարունակէ :

Յետոյ ուրիշ գաւառական երեսփոխան մ'եղանով պատերազմական նպատակ վրայ առնաբանութիւն մը կարգաց , կերպիւ մը մեղադրելով Պօլսոյ հարուստներն որ չեն փութար այս աղբային գործին հանգանակել :

Հայկի երեսփոխան Ապարիւր Բահման Էֆէնտի ալ ըսաւ թէ կընդունի Ահմէտ Էֆէնտիի առաջարկութիւններն , ի բաց առեալ Բէտիֆ փաշային պատերազմի ծառայի երթալու կէտը , պատերազմական նախաբանին հոս կենալը պատերազմի գաշտը ներկայ գտնուելէն առելի հարկաւոր դատելով :

Ուրիշ քանի մ'երեսփոխանք ալ խօսք ուղեցին այս խնդրոյ վրայ , բայց նախագահ ըսաւ թէ՝ առելի լաւ էր այս երկու խնդիրներն հատուածոց քննութեան յանձնել , գիտնալու համար թէ պէ՞տք է անմիջապէս թագը իւր մը յղել առ Բ. Դուռն :

Սոյն միջադէպին գոցուելէն ետքը լորտ Տէրպիի ուղեկալ շնորհակալութեան ուղեւ մը քուէարկելու առաջարկութիւնը ներկայանալով , ժողովը միաձայնութեամբ քուէարկեց :

Սոյն որոշումէն ետեւ լրագրական օրինաց փոխառնութիւնն սկսեալ , Նիքօրաքի Սուրիտէ Էֆէնտին յիշեալ օրինաց պատժական գումար բարձրովն ջնջել առաջարկեց ճարտար և իմաստասիր առնախօսութեամբ մը : Սոյն կարևոր առաջարկութեան վրայ բաւական երկար և ջերմ վիճաբանութիւն մ'եղաւ , որոյ քաղաքացիական մեր յաջորդ թուոյն կը թողունք :

Մայրաքաղաքի թուրք լրագրերէն վաղ ըլլաւ , իւր ապրիլ 27 (անցեալ չորեքշաբթի) թուոյն մէջ միջառանց ալան կամ առելի ճիշդ խօսեալով յիմարական գրգռիչ յօդուած մը հրատարակած ըլլալով , Բ. Դուռնէն հետեւեալ պաշտօնական հերքումն և միանգամայն սպառնական աղբարարութիւնն հաղորդուեցաւ թուրք լրագրաց :

Վաղ ըլլալով լրագրին իւր ապրիլ 27 թուոյն մէջ յօդուած մը հրատարակած է « Ինչու էր Լուրդա , ո՞ր կերպով էր Լուրդա » մակագրով և Մէհմէտ Մ. . . տ տոտրագրութեամբ : Այն յօդուածը լի է այնպիսի անպարտաւորութեամբ որ օղջամիտ խաղաղ մը մտաց մէջ չեն կրնար բնաւ ծնունդ առնելու : Հիշելով այս յիմար կարծիքը կուգէ հաստատել թէ Նիքօրաքի մեզի դէմ է , և թէ ներկայ պատերազմը պարզապէս քրիստոնէական խաչակրութիւն մ'է իրաւութեան դէմ , այնպիսի ժամանակ մը , որ կրօնական գլխոյ միտաբանութեան դար կրնայ կոչուիլ : այնպիսի ժամանակ մը , ուր խաչն և մահիկը կը միարանին աղգաց աղատութեան թշնամոյն դէմ կռուելու : այնպիսի ժամանակ մը , որ չկրնար իւր նուազ կարևոր նկատուիլ քան ասկէք քան տարի առաջուան ժամանակն , ուր Գաղղիա , Անգղիա և իտալիա մեզ օգնութեան դիմեցին , և իրենց ոչ թէ թշնամութիւնն , այլ բարեկամութիւնը զոյգ առին իրենց զինուորը մեզ օգնելով : այնպիսի ժամանակ մը , ուր Անգղիա հերքելով Ռուսիոյ խաբէական յայտարարութիւններն , որովք կրնայ թէ Իւրապիոյ բաղձա :

նաց համեմատ կը գործէ , գիմակաղերմ ըրաւ . անոնց ստուծիւնն և բարոյապէս հարուածեց զՌուսիա . այնպիսի ժամանակ մը , ուր Անգղիա չգաղղիցաւ աղգաց իրաւանց և արգարութեան դժուար սահմաններուն մէջ իւր բարեկամութիւնը մեզ ցոյց տալէ : այնպիսի ժամանակ մը , ուր Անգղիական մեծ աղգ էն միլիտար բողոքականք ուղեւորներ կը մատուցանեն մեր Օգոստոսիոս խաղաղիս , և այնչափ օգնութիւն զրկեցին մեզ թէ՛ գրամով և թէ՛ մարդով : այնպիսի ժամանակ մը , ուր Անգղիական մամուլը կարևոր գրութիւններ կը հրատարակէ այն անօրէն միջոցներուն վրայ , զորս Ռուսիա ի գործ կը դնէ իւր ժողովրդաց մէկ մասին կը բռնէր փոխել տալու համար : ամբար իմիջեց , որոց գործածութիւնը անոնց պատիւը պղծեց : այնպիսի ժամանակ մը , ուր Մահառաց աղանաւ աղգը , որ մեր սիրելի և հատուածու գաղանկցին և բարեկամին Սուրբիոյ անբաժանելի մասը կը կաղմէ , իւր եղբայրակցութիւնը կը լայտնէ իւրամ աղգին : այնպիսի ժամանակ մը , ուր Ս. Պապը՝ երեք հարիւր միլիոն կաթոլիկաց հոգեւոր գլուխը , բարձրաձայն իւր համակրութիւնը կը յայտնէ մեզ , կը գաղապարէ մեր ամենուս կրօնից թշնամին , և խաղաղ գորաց յաջողութեան համար կաղութէ : այնպիսի ժամանակ մը , ուր Օսմանեան երեսփոխանական ժողովոյ անդամք բողոքեցին Ռուսիոյ պաշտպանութեան դէմ : այնպիսի ժամանակ մը , ուր եկեղեցեաց և սինակոկալից մէջ աղօթքներ կը լայն կայսերական զինուոր յաջողութեան համար , ուր ֆրիտոնեայք և իսրայէլացիք կամաւորապէս զինուոր կը գրուին և հասարակաց հայրենեաց պաշտպանութեան համար իրենց կեանքն ու հարստութիւնը զոհելու պատրաստակամութիւն կը յայտնեն : այնպիսի ժամանակ մը , ուր խաղաղագրութիւն հրաման ըրաւ Օսմանեան իսրայէլացեաց , որ հայրենեաց համար մինչև իսկ շարաթ օրերն աչխատին : այնպիսի ժամանակ մը , որոյ նմանը չկայ պատմութեանց մէջ , և ուր ամենէն հուսկաւոր և բարձրատիկան իւրեաներն ու չէ իսկին ինքզինքնին անկարող կը դառնան իրենց շնորհակալութիւնն յայտնելու աչա ամեն պարզ և աչ համար զոր Ամենակալը կընէ իրենց : այնպիսի ժամանակ մը փրկապէս , ուր ամեն դէպքերը մեր Օգոստոսիոս վեհապետին իւր Օգոստոսիոս հորմէն ոչ նուազ բարեբաղդ ըլլալը կը հաստատեն :

« Յօդուածին հիշելովն այս ամեն նշանաւոր իրողութիւնները մէկգիծողով , մտացածին ու ծագաւոր իրողութիւններ պատմելու երկր է : Այս բանը նշան մ'է մեզ համար թէ գաղաւթաբար Ռուսիոյ ծառայելու ուղած է , գաղաւթաւորով պետութիւնն և իւրամ աղգը . նշան մ'է թէ բարեկամութեամբ կուրցամ , ամեն կերպիւ նախապատուութիւն կուտայ իւր հայրենեաց թշնամոյն :

« Վերջապէս տարակոյտ չկայ որ անհաւատ (քեաֆիւր) մ'է և իւր ըրածը ոճիր : Սակայն միմիտարական է մտածել որ այն յօդուածը գրող ծանծաղամիտ բնաւ ծանօթութիւն չունի իւր հայրենակցաց վճակին ոգւոյն և զգացմանց : իւր լեզուն ալ իրովին կապացուցանէ որ Օսմանեան աղգէ չէ : վստան զի իւր յօդուածին մակար իւրն ոչ միայն Օսմանեան ընդամին փախելութեան , այլ և թուրք լեզուին կանխեաց բողոքովն հակառակ է :

« Հրաման է մեզ ծանուցանել որ եթէ ուրիշ մէկն ալ համարձակի այն :

պիտի բանդադուչանք հրատարակել Շէրիի և քաղաքակրթութեան հակառակ և Պետութեան ու աղգին կարծեաց դէմ , իւր անուղեղ գլուխն օրինաց զօրեղ ձեռքով պիտի ջախջախի : »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԷԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
2 մայիս . երկուշաբթի իրիկուն	9,	6	
3 մայիս . երեքշաբթի առաւօտ			
բացուեցաւ	9.12		
ժամ 6 1/2 ին	9.13		
Բաւական երկրորդ	Փր.	23 1/2	
Թղթաւոր	Իր.	176	
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ			
Կ. Պօլիս 2 Մայիս			
Սոսիթէ Ժննրալի բաժ. Անգղ. իր.	2.24		
« ֆոխանկութեան	4.20		
Կ. Պօլսոյ Պանքային	2.18		
Քրէտի Ժննրալ	1.30		
Քրէտի Օսթրո-թուրք	—		
Փոխ. 1863	Ֆր.	46	
« 1865	«	47	
« 1869	«	43	
« 1872	«	44	
« 1873	«	42	
Թրամուայ	Սամ. իր.	1 30	
ԸՆԹԱՅՔ ԻՐԱՄՈՅ			
2 Մայիս			
Անգղ. իր.	Ար.	109 25	
Նարոյն ոսկի	«	87 28	
Խմելու Ռուս	«	9 10	
Գրքեր	«	51 3	
Հինգ ֆրանք	«	—	
Հինգ նոց	«	117	
Պղինձ	«	178	

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

ՀՐԱՆԻՐ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՍԺՈՒՄՆՍ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ մայիս 6 ի Ղալաթի :

Առեանը պիտի բացուի ճիշդ ժամ 7 ին և դոյուէ 10 ին :

Հրաւիրեալ են Երեսփոխան Էֆէնտիներն , իրենց աղգ ասիրական պարտականութիւնը կատարելու փութալ :

2 մայիս 1877

Ի Պատրիարքարանի Հոգոյ

Կ. Պօլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՈՅ

ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՐԵԱՆՈՅ

ՕՐԱԿԱՐԳ

1. Բացուի մ' ժողովին ի նախագահէն .
2. Ընտրութիւն Մայր զիւանի :

Առ բարեւեր ժողովուրդ Հայոց .

Յիսուսի ֆրիտոսի Տեառն մերոյ Համարձեւն յառաջիկայ տօնին ըզ Զ' գրաբարչաւ և աղքատութիւն ժողովուրդ Հայոց , կը հրաւիրուի յիշդ . Հիւանդ անոց , ինչեղեղով որ այս տարի ամեն տարին եւ առելի կաթուր է Ձեր օժանդակութեան , վստան զի վեց հարիւր մօտ հիւանդ , որք և անտեղուկ աղգայինք պատասպանած են հոն :

Արդ ի սէր վստան մեր աղքատեցելոյն Յիսուսի ֆրիտոսի , բարեհաճեցէք յայց երեւի վ' միմիտարել Ձեր անոք և տառապալ կողարչներն ու զաւակներն , որք Ձեր կարկէցութեան ու զաւարթաւ տառապանք մ'անթեան կ'պատեն անձկանք :

1877 մայիս 1

Միտմ աղօթարար

Ի Պատրիարքարան Պատր. Կ. Պօլսոյ

Հայոց Կ. Պօլիս ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՐԵԱՆՈՅ

Ինչպէս Ամեն . Ս. Պատրիարք Հօր վերոյդրեալ հրաւիրագրէն յայտնի է , յառաջիկայ հինգշաբթի մայիս 5 , Ազգ. Հիւանդ անոցի հիշդ տաղեգար ձի հանդէսն ըլլալով , Ամեն . Ս. Պատրիարք Հայրը հանդիտար Ս. պատարագ պիտի մատուցանէ :

Թուով է Հոգաբարձութիւնն որ Մէծարգոյ աղգայինք կը բարեհաճին իրենց ներկայութեամբ պատուելով ազգ ասիրաբար սոյն հանդէսը :

միմիտարել վեց հարիւր մօտ խեղճ պատասպաններն :

77 մայիս 2

Միտմ յարգանք

Գրասեն. Հիւան. ի Գիմաց Հոգ. Հիւ. Սենեկէի Մ. Մանուկեան

Տիգրանակերտի առաջնորդ Գեր. Տ. Փիլիպոս նորապատկ Ս. Եպիսկոպոսը շարաթ օրը Կ. Պօլիս հասաւ Բեթիլի ճանքով :

Ե. Զ. Գ.

Ազգային ժողովոյ Ժ. Կ. Ի. նիստերուն տպեալ առնեալութիւնն ներք կը ծախուին Գարագեղի կամուրջին գլուխը Երկանեանց պառաքան , և Կ. Պօլսոյ կողմն ալ թուէր Պօլսոյ աղային խանութը :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐՈՒԹԻՒՆ

ԳՊՐՈՅԱՅ ՀԱՄԱՐ

Հիւ գործուէն Արեւելէն Ժողովուրդ

ՄԱՍԷ Բ.

Յօրենք Մ Մամուրեան

Զմիւռնիա տպագրութիւն Տէտէտան

Այս ընտիր և ամենակարեւոր դատագրքն Բ. մասն որ 400 էրեւէ կը բաղկանայ , աւարտած և Պօլիս հասած ըլլալով կը ծախուի Եֆէնտին Զմիւռնիոյ ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը , և ուրիշ գրաւաճառաց քով :

Գին 2 ֆրանք 50 անթիլ :

ՇԱՀԷՆԷ Ի ՍԻՊԻՐ

Կ Ա Մ

ԳԱԼԹԱԿԱՆ ՀԱՅՔ

Գրք. Ս. Տէր Մարգարէ

Ազգային գրականութեան մէջ բողոքովն նոր տեղ մը կը բռնէ այս րեսիր վէպն , որոյ մէջ մեր աղգին անցեալ և ներկայ կեանքն այնպէս բաղմալոյցման և հետաքրքրաւոր երեւոյթներով նկարագրուած է , մասնաւոր . գաղթականութեանց տխուր պատճառներն և անոնց աղետները վախճանն , որ ասեն խորհող աղգայինց վրայ պարտ կը դնէ այս վէպէն օրինակ մ'առնելու իրենց մօտ . վէպ մի՞ որ ներկայ ժամանակիս համար իրաւ կարեւոր էր :

408 էրեւէ կը բաղկանայ այս րեսիր վէպն Արամեան տպարանէն հրատարակուած , և կը ծախուի Եֆէնտին Զմիւռնիոյ ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը , գին 2 1/2 ֆրանք :

ՄԱՐԻՈՆ ՏՐԼՈՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱԿԸ

Կ Ա Մ

ՊԱՏՐԱԿԱՆ ՏԱՐՓԱՆԿ

Հեղինակ Էմմէն տը Միդուր

Թարգմանց Գր. Չիլիկեան

Սոյն հրահանգի վէպին Հայերէն թարգմանութեան Բ. հատորը Պօլիս հասած ըլլալով կը ծախուի Եֆէնտին Զմիւռնիոյ ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը . և ուրիշ գրաւաճառաց քով : Գին 2 ֆր.

Ամբողջ գործն չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ :

ԽՐԱՏԻ ԲԻՐՈՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԵԱՅ

ԱՄՈՒՆԻԹԻՒՆ

Արմաշու վանոց տպարանէն ի լոյս ընծայուած Մէյնսն Շարին Նըշանաւոր գործն , որ երեք կէտերու ամենակարեւորն , աղաւթ և բնականեաց վրայ հիմնուած է , մեր աղգայինց ալ օգտակար ընելու նպատակաւ կը ծախուի Պօլիս Զաղմաքճուրդ փողոց թիւ 20 Յ. Գալաֆեանի գրաւանք . գին 1 ֆրանք :

Ի խազեր դ օրծ ակոտոր
Վ . Բ . ԿՅԱՄԷ.